ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ | 2021

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների անցուդարձի մասին:

C.O.A.C.H.

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, «Career Orientation Aimed at Community Happiness» (C.O.A.C.H.) երկարաժամկետ համագործակցային ծրագրի շրջանակներում, 2021թ. սեպտեմբերի 6-13-ը Գյումրիում հյուրընկալեց "Training Activity Advanced Youth Coaching Training (Life, Goal Setting and Career Guidance)" խորագրով դասընթացավարներi
վերապատրաստման երրորդ միջազգային դասընթացը:
Դասընթացի նպատակն է երիտասարդական աշխատողներին զինել քոուչինգի և դասընթացավարի հմտություններով, որպեսզի վերջիններս էլ իրենց հերթին այդ մեթոդներով հզորացնեն և աջակցեն երիտասարդներին իրենց նպատակների սահմանման և մասնագիտական կողմնորոշման հարցում:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Career Orientation Aimed at Community Happiness» (C.O.A.C.H.) երկարաժամկետ համագործակցային ծրագրի շրջանակներում իրականացրեց «City of my Dream» խորագրով աշխատարան 14-18 տարեկան երիտասարդների համար:

Աշխատարանի նպատակն էր երիտասարդների հետ միասին վեր հանել իրենց համայնքում առկա խնդիրները և սահմանել երազանքների քաղաքի իրենց տեսլականը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

EMPLO(YOU!)TH

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Գյումրիում անցկացրեց երրորդ՝ հավասարակից ուսուցման թեմայով դասընթացը՝ «EMPLO(YOU!)TH. Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում հավասարակից ուսուցման միջոցով երիտասարդների աշխատունակության խթանում» ծրագրի շրջանակներում:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Վրաստանի Քոբուլեթի քաղաքում կայացավ «Future skills for Youth» խորագիրը կրող միջազգային դասընթացի փուլը երիտասարդական աշխատողների համար: Հայաստանի թիմը ներկայացնում են Աշոտ Մովսիսյանը՝ ԵՊՀ հրավիրյալ դասախոս, Էթերի Ասատրյանը՝ Կազա շվեյցարական մարդասիրական հիմնադրամի երիտասարդական խմբերի համակարգող, Էռնա Գալստյանը՝ «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» ՀԿ-ի արտաքին կապերի պատասխանատու, և Մայքլ Գրիգորյանը՝ «Մեյջորել Հայաստան» ընկերության կրտսեր թիմի ղեկավար:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Խորվաթիայի Չիովո կղզում կայացել է «Food4Good» խորագիրը կրող Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրը սննդի և առողջ ապրելակերպի թեմայով:
Հայաստանի թիմը ներկայացնում են Քնարիկ Սիմոնյանը, Նարեկ Շամամյանը, Դավիթ Միրզոյանը, Սոնա Նաղդալյանը և Գևորգ Հովսեփյանը: Խմբի ղեկավարն է Քրիստինե Հովսեփյանը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Լեհաստանի Պոզնան քաղաքում տեղի ունեցավ «HEARTools - Human Equality And Rights Trainings by using art and media tools» խորագիրը կրող Էրազմուս+ միջազգային դասընթացը մարդու իրավունքների, արվեստի և մեդիայի թեմայով:
Հայաստանի թիմը ներկայացնում են Սաթենիկ Առաքելյանը՝ Վ. Բրյուսովի անվան համալսարանի ուսանող և Իզաբելլա Խանզրատյանը՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի միջազգային ծրագրերի համակարգող:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Իսպանիայի Կանտաբրիայի շրջանում իրականացավ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում գյուղական մշակույթի զարգացման թեմայով աշխատանքային այց՝ «Youth Workers And Rural Heritage Development» խորագրի ներքո:
Հայաստանի թիմը ներկայացնում են ԵՆԿ ՀԿ-ի «ԲայքԼայֆ» ՍՁ համակարգող Լարիսա Ժամակոչյանը, Սյունիք-Զարգացում ՀԿ-ի երիտասարդական ծրագրերի համակարգող Հասմիկ Գալստյանը, «Շեն» ՀԿ-ի Շիրակի մարզի համակարգող և «Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական ՀԿ-ի ծրագրի ղեկավար Եսթեր Գրիգորյանը և «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամի կամավոր և գյուղական տավերն «Հնձանի» հիմնադիր Արա Միքայելյանը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

LEVEL UP IN ERASMUS+

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, «Foreningen Framtidstaget» (Շվեդիա) հետ համատեղ՝ Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում, հյուրընկալել է «Level UP in Erasmus+» միջազգային դասընթացը ծրագրի մշակում և կառավարում թեմայով:
Դասընթացը նպատակաուղղված է զարգացնելու երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ որակյալ նախագծերի մշակման, կառավարման, մշտադիտարկման և գնահատման հմտությունները՝ մասնավորապես «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿՈՒՄԲ

Հոկտեմբերի 9-ին ավարտվեցին անգլերենի սկսնակ և միջին մակարդակների վեցամսյա տևողությամբ ակումբները:
Վերջին հանդիպման ընթացքում մասնակիցները կիսվեցին իրենց տպավորություններով ու ձեռքբերումներով, ինչպես նաև պարգևատրվեցին վկայականներով:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԱՐՇԱՎ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած հերթական ճանաչողական արշավը:
Արշավը հիշարժան ու բովանդակալից դարձրեց Մանթաշ գյուղի ակտիվ երիտասարդ և արհեստավարժ վարորդ Ռուբենը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ

Սեպտեմբերը մեկնարկեց «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի աշխատակազմի արձակուրդից վերադարձով:
Կենտրոնի վերանորոգումից հետո պատերին ստեղծվեցին նոր ու գեղեցիկ նկարներ, որոնց հարցում կամավոր աջակցություն ցուցաբերեց Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի գրաֆիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Հագեթա Թադևոսյանը:

Կենտրոնի գործունեության ծանոթացման նպատակով սեպտեմբերի 22-ին «Գյումրու երիտասարդների տուն» այցելեցին «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոնի սաներն ու աշխատակիցները: Կենտրոնի պատանիների հետ միասին նրանք անցկացրեցին հրաշալի ժամանակ՝ տարբեր կրթական ու ժամանցային խաղերով լի:

Ամիսն ամփոփեցինք «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի վերաբացման պաշտոնական արարողությամբ: Կենտրոնի բարեկարգ բակն ու ներքին հարմարեցվածությունը այսուհետ թույլ կտան հենաշարժողական խնդիրներ ունեցող երիտասարդներին օգտվելու կենտրոնի ծառայություններից: Բակի բարեկարգումն ու շենքի հարմարեցումը հենաշարժողական խնդիրներ ունեցող երիտասարդներին իրականացվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի, Յունիսեֆի և Գյումրու համայնքապետարանի կողմից:

Հոկտեմբեր ամիսն ամփոփվեց Երևան էքսկուրսիայով, որի արդյունքում Գյումրու և Սպիտակի երիտասարդների տների թիմն ու սաները եղան Մատենադարանում, Երևանի կենտրոնական, տեսարժան վայրերում և ունեցան ուսումնաճանաչողական այց Երևանի Մանկապատանեկան Ստեղծագործության Քաղաքային Կենտրոնում, որտեղ ծանոթացան կենտրոնի գործունեությանը և ունեցան հանդիպում դերասան Սամվել Թոփալյանի հետ:

ՀԵՏԵՎԵԼ ԷՋԻՆ